3. ՇԱՀ-ՄԱՅՄՈՒՆ

Կէղնի չէղնի թագավոր մի կէղնի, ուրին լե՝ իրեք տղա։ Տղեկ-ներն է կը մեծնան, թագավոր չկարգե։

Կէրթան վազիրին կըսին.— Գնա մեր պապուն ըսե, մղի թըղ կարգե։

Վազիր կըսե.— Շատ աղեկ, ես կէրթամ ձըր պապու մոտ կը նստիմ։ Կէրթաք իրեք ձմերուկ՝ մեկ հասուկ, մեկ անցուկ, մեկ լե քալ, կը բերիք կը դնիք էն տեխ, կը թողիք կէրթաք, ես խոսք կը բանամ։

Թագավորի տղեկներն են հ՝ելան իրեք ձմերուկ կիսին, վազիրի ըսածի պես ճամբին ուրանց պապուն։

Թագավորն վազիրին կըսե.— Վազիր բաբա, սապապ ի՞նչ է օր էտա իրեք ձմերուկ ճամբեր ին իմ տղեկներ ընծիկ։

Վազիրն կըսե.— Էդոր պատճառն էդա է. օր քու տղեկներու վախտ հ՝ընցեր է՝ գուզին կարգվին։

Թագավոր կըսե.— Օր էդպես է, կէրթաս արծթից իրեք հատ խնծոր կիտաս շինել, կաշնիս գիգաս։

Վազիր կէրթա իրեք հատ խնծոր կիտա շինել, կառնե գիգա, կիտա տղեկներուն։

Թագավոր եր կիմնա, վազիր ուր հ՝ուզած խնծորները տվեր է շինել՝ թալալ կիտա կանչել. «Վիրն օր ախճիկ կա, թըղ հագնի խրփի հ՝իգա իմ քոշկ ու սարի հ՝առշևով հ՝ընցնի»։

Կիգան, կհ՝ընցնին։ Մեծ տղեն ուր խնծոր կը զանե լալի ախ-ճկան, օրթանճա տղեն՝ վազիրի ախճկան, պզտիկ տղեն լե ուր աչք առած ախճկան օր կը զարկե, խնծոր կը փստա կհ՝ընցնի։ Կհ՝ընկնի

Հ՝ետև խնծորին կէրթա։ Կը տեսնա օր ուր խնծոր գնաց առավ քարի մի։

Կէրթա օր ուր խնծոր վերցու, քարի տակեն մայմուն մի գելնի խնծոր կը բռնե։

Թագավորի տղեն կըսե.—Մայմո՛ւն, իմ խնծոր հ՝որի՞ կը տանիս, տուր իմ խնծոր ես կէրթամ։

Մայմուն կըսե.—Թագավորի՛ տղա, աստվածուքեն զիս քզիկ համար է ստեղծի, ես ըսկի խնծոր կիտա՞մ։

Թագավորի տղի չարեն կը կտրի, կառնի մայմուն կիգա։ Օր կիգա, թագավոր կը տեսնի ուր տղեն առավ մայմուն մի էկավ։

Կըսե տղին.—Տղա՛, իմ աչքի առջևեն ռատ էղի գնա՝ դոր կապրիս, ապրի։

Թագավորի տղի չարեն կը կտրի, կառնի մայմուն, կէրթա քաղքից դուրս, տուն մի կը գտնա, կը նստի։

Թագավորն է, տղեկներն օր կը կարգե խըլըսի՝ ժուկ ու ժամանակ մի կհ՝ընցի վրեն. ինքն ուրին կըսե. «Ջա՛նըմ, ես իմ տղեկներ կարգեցի, չհարցուցի թե՝ աճեպ իմ հարսներ հունար մ՝ունի՞ն, թը՞ չէ»։

Կը կանչե տղեկներ, կըսե.—Կէրթա՛ք, ձեր կնկտոց կըսիք, ընծիկ մեկ-մեկ ձեռք շապիկ ու թունբան կարին, ճանբին հ՝իգա։

Էրկու տղեն ուրանց կնկտոց վրեն հ՝ավլա են, պզտիկ տղեն ուր կնկա վրեն հ՝ավլա չէր, կըսեր. «Հալա ըտոնց կնկտիք իսան ին, խոսք կը հասկընան, ես էրթամ իմ կնկան ի՞նչ ըսիմ, մայմուն ի՛նչ կը հասկնա»։

Թամանտար կէղնին տղեկներ կելնին կէրթան ուրանց տներ, պզտիկ տղեն կէրթա ուր տուն նիաթ կէնե։

Կնիկն կըսե.— Մա՛րդ հ՝որի՞ն իս նիաթ էրի։

Կըսե տղեն.— Ի՛մալ չէնիմ, իմ պապ խանչեր է մզիկ ըսի՝ «Գացեք ձեր կնկտոց ըսեք, մեկ-մեկ ձեռք շապիկ թունրան թըղ կարին օղորկին ընծիկ». կը ֆքրիմ, ի՞նչ ըսիմ քզիկ, դու մայմուն իս, քու ձեռքեն ի՞նչ գիգա։

Մայմուն կըսե.— Տղա՛, դու քինե դուրս կէրթաս, կը զարկիմ քու բերան օզրի, Շահ Մայմունի անուն գացեր է հ՝ելիր է աշխարքի վերջ, ընծիկ Շահ-Մայմուն կըսին, դու ընծի իմա՞լ դինաս։— Կըսե.— Ա՛ռ էդա խնծոր, գնա էնտեխ օր ես դուրս հելա. զարկ քարին իմ մամ կելնի դուրս, կըսե. «Փեսա ի՞նչ գուզիս». կըսիս. «Քու ախճիկ ճամբեր է շապիկ թունբնի գուզ ու սինու գուզ գուզե»։

Տղեն կառնե խնծոր կէրթա, կը ղարկե քարուն, զոքանչ կելնա։

Կըսե.— Փեսա, ի՞նչ զուզիս։

Կըսե.— Քու ախճիկ ճամբեր է շապիկ-թունբնի ու սինու դուզ դուզե։

Մայմուն կիտա։ Կառնե տղեն գիգա, կիտա Շահ-Մայմունին։

Շահ-Մայմուն լե, էրկու գուզ կբերե կըկոտրե, մեկի միջեն սինի մի կելնի, մեկին լե շապիկ թունբան մի կելնի, օր մկրատ ու ասեղ ըսկի չառիր է հ'ինք։ Կբերե դնե սինու մեջ, վարդ ու ռեհան կը ցանե վրեն, կիտա իրկան։

Կըսե.— Տղա՛, առ էդա սինին տար քու պապուն։

Տղեն կը տանե, կը դնի պապու հ'առնչ. պապն օր կը տեսնա, կը շիվրի կը մնա, կը տեսնա օր պզտիկ տղի կնկա ճամբած շապիկ թունբան մեկել էրկու հարսի շապկից թունբնից խորոտիկ է։

Կըսե.— Ես լե դավաթ մի պըտի տամ իմ հարսներուն։

Տղեկներուն կըսե.— Վաղ թատարուկ կը տեսնամ, դացեք, առեք ձըր կնկտիք, բերեք հոդա, պատիվ պըտի տամ ուրանց, մարամ օր էդա աղեկութեն էրին ընծիկ։

Տղեն մեկ էլ ուր նիաթ կը կախե, կէրթա տուն։

Կնիկ կը տեսնի օր իրկա նիաթ կախուկ է։

Կըսե.—Մա՛րդ, քու նիաթ հ'որինի՞ս էրի։

Կըսե.— Ի՛մալ չկախիմ, իմ պապ վաղ ձըղիկ պատիվ կիտա, կը տանի ուր դիվան, շիվրեր իմ մանցի, իմալ առնիմ քղի էրթամ։ Հ'ելնիմ կապ թալնիմ քու վիզ, առնիմ էրթամ իմ ախբոր կնկտոց հ'առչև. կը մանիմ դետին, չտանիմ. թագավորի ձեռքեն չըկրնամ ազատիմ։

Կընիկ կըսե.— Թագավորի տղա, դու քինե հ'եվել կէրթաս ըստահաղ, աշխարքի մեջ Շահ-Մայմուն կըսին, դու կըսիս. «Հ'ելնիմ կապ մի թալիմ քու վիզ, կառնիմ էրթամ»։— Հ'ելի առ էդա խնծոր դնա էն քարու մոտ, զարկ քարուն, իմ մամ կելնա դուրս, կըսա՝ «Ի՞նչ ա, փեսա ջան». կըսիս՝ «Քու ախճիկ ճամբեր ա ուր շորեր դուզա, քառսուն բեսլամի գուզա ու սինու դուզ գուզա». կիտա, կառնիս կիգաս։

Տղեն կելնի կառնի խնծորն ու կէրթա, կէրթա կը զարնի քարուն, Մայմունի մամ կելի դուրս։

Կըսե.—Ի՞նչ ա, փեսա ջան, էմ լե հ'որինի՞ս էկի։

Տղեն կըսե.— Քու ախճիկն է ճամբի ուր շորեր ու քառսուն բեսլամի ու սինու գզեր գուզե։

Զոքանչն կէրթա կբերե, կիտա փեսին։ Կառնի կիգա, կբերե

կիտա կնկան։ Կնիկ կը կոտրե, կը հանե ուր շորեր, մեկ լե կը կոտրե՝ միջեն կելնի քառսուն բեսլամա. մեկ լե կը կոտրե՝ միջեն կելնի սինի մի։

Կը հագնի ուր շորեր, ծամեր կիջնի մինչև օտքեր, բեսլամեք կը վերցուն գնին սինու մեջ, հ'ետևանց կրոնին ու կէրթան թագավորի ռիվան։

Թագավոր օր կը տեսնի պզտիկ տղի կնկան ու ուր բեսլամեքներուն, կը շիվրի ու կմնա։

Եբօր հաց կբերին կուտին, պզտիկ հարս բրտուճ մի կուտե, տոլմեմ՝ լե կը գլորե թևի մեջ։ Թագավոր լե ուրանց հետ հաց կուտե։ Եբ հացի վրավեն կելնին, հ'առջին հեղ մեծ հարս կէրթա կեսրերի ձեռաց վրեն ջուր կը հ'ըլնա։ Ջուր օր կը հ'ըլնա՝ թև կօզրե՝ տոլմեք կիգան կթափին։

Թագավոր կըսե.— Լաո՛, կերար հերք չէ, լցերիս թևերուգ մեջ լե։

Էնի կէրթա։ Օրթանճա հարս կիգա, ջուր օր կը հ'ըլնա թագավորու ձեռներու վրեն, տոլմեք կիգան թևի միջեն կը թափին։

Թագավոր, էնոր լե կըսե.— Լաո՛, կերար, կերար, էդա գողութեն ի՞նչ է։

Հարս կը թորկե կէրթա։

Պզտիկ հարս կիգա։ Օր կիգա, կը հ'ըլնա կեսբերի ձեռաց վրեն, թևերուց վարդ ու ռեհան կ'թափին թագավորի ձեռներու վրեն։

Էդ հարս թող մնա էդ տեղ, մենք դառնանք տղի վրեն։

Տղեն էդ օր տեսավ, ըսեց՝ «Կանի էրթամ էտոր շորեր թալիմ կրակի մեջ, վառիմ, օր անգամ մ'էլ չհագնի։

Հ'ելավ գնաց տուն, փնտռեց, կնկա շորեր գտավ, թալեց կրակի մեջ վառեց ու դառնավ էկավ։

Կնիկ հ'իմցավ, ըսեց.— Մա՛րդ, չէղնի՞ գացիր իմ շորեր վառեցիր, էկար։

Ըսեց.— Հա՛, վոլահի վառեցի, էկա։

Կերան, խմեցին, հ'ելավ թորկեց էկավ ուր տուն։

Ըսեց իրկան.— Թագավորի տղա, իմ շորեր վառեցի՞ր։

Տղեն ըսեց.— Հա՛։

Օր ըսեց հա, կնիկն ըսեց.— Հան ես կէրթամ, Ջինու-Մաչինու քաղաք, դու արի իմ հ'ետև. հարի էրկրթե սոլ չը հագնիս, էրկրթե գավազան չառնիս քու ձեռք, չը կռնաս ընծի գտնաս։

Ըսեց ու քառսուն ախճկա հետ, էղան մեկ-մեկ էղրվնիկ, թըռան գացին։

Էնդոնք օր թրան գացին, տղեն հ'ելավ ջուխտ մի էրկրթե սու տվեց ուրին շինել, էրկրթե գավաղանըմ' լե առավ ձեռք ու դեմ էրեց գնաց Ջինու-մաշինու էրկիր։

Յոթ տարին թըմավ, անճախ հասավ։

Տեսավ օր, մեկ օր մի քառսուն ու մեկ հատ էղբվնիկ ֆը՞ռ Լկան հ'աղրրիմ' վրեն հիշան, հանին ուրանց շորեր ու մտան հ'աղբրի մեջ կլողկընեն։ Տղեն ձեն չէնեց։ Էն օր լողկըցան գացին։

Տղեն էկավ էտ հ'աղրրի մոտ հորըմ' փորեց ու մտավ մեջ, օրըմ'մեկ էլ էկան էդ էղբվնիկներ կը լողկընեն, տղեն հ'ելավ ուր տեղեն, էտոնց շորեր հ'ըմեն քոմեց։

Ախճկներ լե օր լողկըցան հելան, տեսան ուրանց շորեր տեղ չէ, տղեն լե տեսան՝ խնդրվան օր ուրանց լիրասներ իտա։

Տղեն քառսուն ախճկա լիրասներ տվեց, Շահ-Մայմունին չտվեց։

Շահ-Մայմուն ըսեց.— Տղա, էն օր հողածնի ձեռք քիսավ իմ շորեր, իմ սեր փախավ, տուր իմ շորեր, հ'ելի հըտ հ'իրարու էրթանք մեր տուն։

Տղեն հավատաց, տվեց շորեր, հելան հիտրաց գացին Շահ-Մայմունի տուն։

Օր գացին, ճամբու հետ, Շահ-Մայմուն ըսեց թագավորի տղին.

— Տղա՛, իմ մամ նեղեցեր է քզնե, կէրթանք տուն, կը հերսոտի վըրեդ, կըսե. «Տղա, ա՞ռ էդա սինի ջուր, հ'ելի էդա ծառի գլուխ, պաղըցու առ ու արի»։ Ա՛ռ էդա մաղ, օր հ'ելար ծառի գլուխ՝ իմ մաղով խառնե՝ կը պաղի, ա՞ռ արի տուր իմ մամուն։ Օր բերիր տվիր իմ մամուն, հանտե մեկ լե կը հերսոտի վրեդ, կըսե. «Վերցու էդա քարմաղ, տար արտ ջրե ու արի»։ Ա՛ռ էդա մաղ, խառնե քարմղի մեջ, արտ կը ջրվի, կը թողիս գիգաս, օր հեղ մը լե հերսոտավ քու վրեն, աստված օղորմած է։

Գացին Շահ-Մայմուն ու թագավորի տղեն օր մտան ներս, զոքանչ տեսավ, ճանչցավ, ըսեց.

— Դո՞ւ էր իմ ախճիկ բոներ էր, չթողեր հ'իգեր. վերցո՛ւ էնա սինին, լից ջուր, հ'ելի ծառի ծեր, էնե բուղ, ա՛ռ ու արի, օր իտամ իմ ախճիկ առնես տանես։

Տղեն վերցուց հ'ելավ ծառի ծեր, կնկա մաղով խառնեց, էղավ բուղ՝ առավ էկավ, տվեց զոքնչին։

Զոքանչն ըսեց ախճկան.— Ֆո՛ղ, դու էր սոքվցուցի էդ տղին, օր էրեց բուղ ու առավ էկավ։

Ըսեց ու դառձավ տղի վրեն, ըսեց.— Վերցո՛ւ զքարմազ, ա՛ռ գնա բոստան շրե։

Տղեն վերցուց քարմազ, գնաց, մազ խառնեց քարմղի մեջ. ջրեց բոստան ու էկավ։

Ախճիկ տեսավ օր դակմա հալով մամ չի տա զինք էդ տղին առնե էրթա, ըսեց.

— Տղա՛, իմ մամ չիտա զիս քզիկ, հ՝ելի էրթանք։ Իմալ օր աստված կամեցեր է, հրմալ կէղնի։

Հ՝ելան ու հ՝ընկան ճամբախ։

Եբօր հ՝ընկան ճամբախ՝ սիլեմ զանեց տղին, էղավ էղբ-վնիկ, էղբվնիկըմ՝ էլ ինք դառցավ ու թռան։

Թռան, շատ գացին, քիչ գացին, ախճիկն տղին ըսեց.

— Տղա՛, դառցի իշքե մըր հ՝ետև, տե՛ս մարդ գիգա՞, չի՞ դա։

Տղեն դառցավ իշքեց, ըսեց.— Ինչ օր կրակե մարդըմ՝ կը փոթորկե ու կուգա։

Քիչըմ՝ էլ գացին, մեկ էլ տղին ըսեց.— Դառցի տե՛ս մոտեցա՞վ, չմոտեցա՞վ։

Տղեն դառցավ, իշքեց, ըսեց.—Հասրեհաս է։

Օր ըսեց հասրեհաս է, ախճիկ ճըլոթ մի զարկեց տղին, տղեն էղավ բոսթան, ինք լե բոսթնճի, առավ թիակ, կանավ բոսթնի մեջ քոնռեսնեբուն ջուր կիտեր։

Հ՝ետի գալողն օր հ՝ընկեր էր էդոնց հ՝ետև, դու մ՝ըսեր, էդի Շահ-Մայմունի օրթանճա քուրն էր։ Էկավ կանավ բոսթնի գլուխ։

Ըսեց.— Բոսթնճի, էրկու մարդ՝ մեկ մարդ ու մեկ կնիկ էդա թարաֆով չհ՝ընցա՞ն։

Բոսթնճին ըսեց.— Ես ի՞նչ գինամ հ՝ընցածին, չհ՝ընցածին. ես անճախ իմ բոսթան ջրիմ։

Իրեք հեղ հարցուց, իրեք հեղ էլ էդ շուհաբ տվեց բոսթնճին. քուր թողեց գնաց։ Էն օր թողեց գնաց, Շահ-Մայմուն, էրկու ձեռք զարկեց իրար, բոսթան էղավ էղբվնիկըմ, ինք լե հ՝ետևեն թռան գացին։

Քուրն դարձավ էկավ, ըսեց.—Ջգտա։

Ըս հաղ պզտիկ քուր հ՝ելավ հ՝ընկավ հ՝ետև։

Շահ-Մայմուն ու թագավորի տղեն խել մի տեխ գացին։

Շահ-Մայմուն ըսեց.—Թագավորի՛ տղա, իշքե քու հ՝ետևեն, տե՛ս ո՞րն է գիգա։

Իշքեց, ըսեց.— Կեծրմ կրակ կը պրծրղտա ու գիգա։

Քիչ մի մնաց, անգամ լե ըսեց.— Իշքե տե՛ս չմոտեցա՞վ մղիկ։

Տղեն իշքեց ըսեց.—Հասբեհաս է։

Օր ըսեց՝ «Հասբեհաս է», ճըլոթըմ ղարկեց տղին, էրեց ջա-ղացրմ, ինքն էլ էղավ ջաղցրպան մի, կանավ հ՝առեջ։

Էկավ, էկավ ուր քուրն է, պղտիկ քուր։

Ըսեց.— Ջաղըցպան, էղրվնըկու լիբասով տղեմի ու ախճիկմ՝ էդա թարաֆով հ՝ընցա՞ն, չհ՝ընցա՞ն։

Ջաղցրպան ըսեց.— Անճախ ես իմ ալրի բետ ու մանտրին մտիկ տամ. ես շա՞տ գինամ էղրվնըկու լիրասով տղեմի ու ախ-ճիկըմ էգա թարաֆով հ՝ընցան, չհ՝ընցան։

Իրեք անդամ ըսեց, իրեք անդամ էլ ջաղցրպան էդ պատաս-խան տվեց, թողեց գնաց։

Թողեց գնաց, մամուն ըսեց.— Ջտեսա։

Օր ըսեց չտեսա, մամ մեկել ախճիկ լե կանչեց բերեց, ըսեց.

— Դուք գացիք, ճամբու հետ ըսկի բան չտեսա՞ք։

Օրթանճա ախճիկն ըսեց.— Հ՝որի՞ չէ, հա վոլահի, ես տեսա-բոսթան մի ու բոսթնճի մի, հարցուցի ըսի՝ «Բոսթնճի, էղրվնըկու-քիսրաթով տղեմ ու ախճիկըմ էգա տեղով չհ՝ընցե՞ին». ըսեց. «Ես-դինա՞մ, հ՝ընցեր, չհ՝ընցեր ին. ես անճախ իմ բոսթնին ու իմ ջրին-իշքիմ»։

Մամն ըսեց.— Քոռներ քու աչքեր. էն բոսթնճին քու քուրն էր, բոսթան լե տղեն, բոսթան կոխըռճեր. բռներ բոսթնճին էլ հետդ-բերեր, կէղներ կէրթար։

Պղտիկ ախճիկն էլ ըսեց.— Ես ջաղացրմ տեսա ու ջաղցրպան-հ՝առեջ. իրեք հեղ հարցուցի՝ ջաղցրպան, էղրվնըկու շրքըլով տղե մի, ախճիկ մի էգա գինով չհ՝ընցեր ին. հերսոտավ վրես, ըսեց. «Ես ախ-ճիկ ու տղին բաքլամիշ կէնի՞մ, ես անճախ իմ ջաղցին ու ալրի բետ-ու մանդրին իշքիմ»։ Իրեք հեղ ըսի, իրեք հեղ լե էդ ջուհապ տվեց,-Թողի էկա։

Մամն ըսեց.—Քու էրկու լուս թափի. էն ջաղցրպան քու քուրն-էր, ջաղացն ու ալուր լե տղեն. ալուրն թափեր, խիճ մի փրցուցներ-պատեն, բռներ ջաղցրպան բերեր քու հետ։

Մամու ճար կտրավ, հ՝ելավ ինք հ՝ընկավ հ՝ետև, էղավ արծիվ մի, թևեր թափ հ՝իբար, կրկըշաց ու թռավ։

Տղեն ու ախճիկ խել մի գացին, ախճիկն մոր կըրկըշուն լսեց։

Ըսեց.— Տղա՛, դառցի հ՝ետևանց, տե՛ս էն ո՞րն է կիգա։

Տղեն դառձավ, ըսեց.— Ինչ օր արծվի թեփրընեբուց է կրակ-կը թափի, կը կըրկըշա ու կիգա։

Քիչըմ տեխ գացին, անգամ լե ըսեց. «Տղա, դառձի տե՛ս չհա-ա՞վ»։

Տղեն դառձավ իշքեց, ըսեց.— Հասբեհաս է։

Օր ըսեց՝ «հասբեհաս է», զարկեց տղին ճըլոթըմ, էրեց խոթոթիկ օձ մի, ինք լե էղավ բարկուձիկ ու հ՝երկեն սև օձ մի, պըլուվավ էրկա բոլոր, գլուխ վերուց դրեց էրկա գլխու վրեն։

Մամն էկավ հասավ թը թուն թափեց, թը զարկեց, ինչ էրեց՝ ախճկա վրեն չկոցավ։

Ըսեց.— Ախճի, դը գնա, քու սեր իմ սերի վրեն հ՝ընցուց։

Մամ դառձավ գնաց ուր տուն։

Ախճիկն էլ հ՝ելավ իրիկ էղրվնիկ գառձուց, շուն դաձուց, դել դառձուց, հազար տեսակ ջանավըրի փոխեց, առավ էկավ իրկա էրկիր։

Եբոր հասան իրկա էրկիր, ճըլոթըմ զարկեց տղին՝ դառձավ իսան, ըսեց.

— Հեղ մը լե հըմալ բան չէնի՞ս. տեսա՞ր ինչ օյիններ հանի քու գլուխ։

Ձուհապ գնաց թագավորին թե.—«Քու տղեն առավ ուր կնիկ էկավ»։

Թագավոր հ՝ելավ ուր ասքրով էկավ հ՝առեջ, տարավ հ՝իջուց։ Նոր բռնեց հարսնիք ու քեֆ ուրախութեն էրին ուրանց։

Էնոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձըր մուրազին։